

16485

161

891.99

U-12

11/10 84
27/4

Երանեմովանի Ը. Ը. ծնունդից (65)
Երանեմովանի. Բաղնաշի Երանեմովանի
Երանեմովանի

926
[891.99]
1926

(161)

Գ Ա Ս Ի Տ Ա Ն

ԲԱՐՎԱ. ԲԱՂԱԲԱՅԻ ՄԵԾ. Պ. ՍԱՐԳԻՍ
ՍԱՐԳՍԵԱՆ ԶԻՆԳԻՐԵԱՆՅԻ (65 ԱՄԱՅ)
ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆԸ:

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

1.

Հաղար ութ հարիւր յիսուն մէկ թուին,
Դառնութիւնը բախտիս իջնելով ատեան,
Փնտռելով ամբողջ Բարվա քաղաքին
Մէջը զիս ցուցելու դառը տեսարան:

2.

Ինչ ամենածանր հիւանդութիւնը
Եւ խոր արմատացած թշուառութիւնը,
Սուր Եւ ընդհանուր քաղցածութիւնը,
Մանաւանդ անխաղաղ կեանք ընտանեկան:

3.

Դեռ եւս չատ բանի, Արարիչ Աստուած,
Տեղեակ չեմ գրելու. անվախ, անկասկած,
Ձեռքն ամուսնուս մի գաւաթ լցուած
Ստացաւ ըմպելու բաժակ անջատման:

4.

Մայրիկս ահ ու վախ թափում շրթերից
Քրոջս կուստիկան քնքոյշ այտերից.
Ամուսինս օձի թոյնիւր աչքերից,
ձրկուած, թէք ընկած բաղմոյցի վերան.



891.99
U-12

7003

5.

Ասու՛մ.—Մի թափառիր օտար աշխարհ.
Թողիր հայրենիքդ՝ ընկար քարէ քար:—
Ես մինչ երբ սպասեմ անքուն, անդադար,
Մէկ օր քաղցած, մէկ օր ծարաւ այլոց տան:

6.

Միտկերպ մայրիկս նստած միայնակ,
Թաղարած թաշկինակ ձեռքումը ճերմակ.
Սեփնայ մի լեր, խղճս մեղի, որդեակ.
Զգա՛ւ իմ ողբ, զգա՛ւ իմ լաց ու կական:

7.

Բայց ես չը զգալուի քիչ ժամանակից
Անհոգ, անպաշար մէկ պատի տակից
Նախ իմ կայարան Բարսի քաղաքից
Դէմքս շրջեցի դէպ Ռուսաստան:

8.

Գիշերը վաղ էր. դեռ հաւ չը խօսած,
Միմիայն անճրագ, մերկուած նստած,
Սեւ սեւ աչքերն դեռ քուն չէր մտած,
Նայէր անվրէժ, կարօտ իմ տեսլեան:

9.

Առաջին տարում դեռ իմ ահագին
Միտքերը փակուած, յայտնի չէր շատին.
Դեռ խեղճ ամուսնուս սէրը իմ սրտի
Մջում չէր սառած, չէր գտած բաժան:

10.

Երկրորդ տարումը ինձ կարափելով,
Իմ հայրենեաց սիրով արցունք թափելով,
Մէկէն խափուելով, միւսին խաբելով,
Ապրում էի մի կերպ անքնակարան:

11.

Երրորդ տարում հասած, իմ անմեղ սրտին
Մէջը մի վառվռուն կրակ գցեցին,
Կախարդեցին, նայած չար բախտիս կամքին
Սառցուցին կրծքումս, ազգ իմ ազգական:

12.

Չորրորդ տարում իմ անգին առաքինս.
Իմ վերջին նպատակ ապագայի նա
Մոռացաւ, իմ անդրանիկ, խեղճ ամուսինս,
Գտնելով տեղերով արած այլազան:

13.

Հինգերորդ տարումը կարօտ հայրենեաց,
Գրաւեցին սիրտս շքեղք այլազանց,
Մոռցայ բոլորովին սէր բարեկամաց,
Անուանելով ինձ մէկ դիւրահաւան:

14.

Վեցերորդ տարում անշահ, անօգուտ.
Թշուառ, մնլորեալ՝ երկչոտ, կրակոտ.
Սեւ սեւ աչքեր ցաւոտ լի, կուրծք արիւնոտ,
Ստացայ քաշելու ցաւեր զանազան:

15.

Եօթերորդ տարումը հազիւ եւ հազիւ
Վերստին տարածուեց մէկ ընծայ աղնիւ,
Ստացայ բարեպաշտ մարդկանցից անթիւ
Բարեւ, գովասանք անմոռացական:

16.

Ութերորդ տարումը, ո՛հ յոյս անհատեալ,
Վիզս ճկուած, թշուառ ճարահատեալ,
Ես ինքս ինձ համոզելով դարձեալ
Ռուսաստան կարծում էի ինձ օգնական:

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕ-ЕВРЕЙСКИХ
Академии Наук
СССР

17.

Իններորդ տարումը լալով, սգալով,
Անբախտ ամուսինս սիրտս ջնձալով.
Այսօր չեղաւ, վաղն կերթամ յուսալով,
Զեղաւ արժան ոչ վաղը, ոչ անագան:

18.

Տասներորդ տարումը գունատ, վշտացած,
Սիրտս վիրաւորուած, վերքեր բազմացած.
Սուր, սուսեր, նետ, աղեղ սրտումս լարուած,
Դարձած Ռուսաստան ոտքերիս շղթան:

19.

Տասն եւ մէկ երրորդ տարում միայնակ
Նստած, սգեւորուած, ընկած հոգսի տակ.
Հագուստս հնացած, գրպանս դարտակ,
Սիրտ իմ դարձուցած պէս անշարժ արձան:

20.

Տասներկուերորդ տարում պաղած նուազած,
Որպէս գետի վերայ նստած հող մաղած,
Սանձր բերնիս ընկած, շրթունքը թաղած
Շունչս սպառուած եմ կիսակենդան:

21.

Տասներեքերորդ տարումը միեւնոյն
Գունաթափ: մաշուած, անդէմք եւ անդոյն
Կերածս, խմածս դառն, որպէս թոյն.
Ինչքան իշտահով վեր առնեմ բերան:

22.

Տասն եւ չորրորդ տարում անցաւոր
Օրերս դգալով, ո՛վ Հայր երկնաւոր,
Մթնկած իմ գլխին աշխարհս բոլոր
Անձս արիւնհարու գայլերի բերան:

23.

Տասն եւ հինգերորդ տարում անօգնեայ
Անգութ եւ անհամար ցաւի տէր եղայ.
Բազում վէրքեր դրօշմած սրտին վերայ,
Շունչս անբնական ուժ անհիմնական:

24.

Տասն եւ վեցերորդ տարում իմ աչքին
Առաջը սեւ ամպով պատած ահագին,
Նախ փակուած ինձ համար կեանքը արտաքին
Եւ երջանկութիւնն մեր յաւերժական:

25.

Տասն եւ եօթ տարու վերջերում,
Արարմունքս եմ յիշում, գոռում, գոչում.
Ո՛ւր է ջինջ շարժուածք իմ աչքերում
Այժմ մարուած, մաշուած խաւարի նման:

26.


Տասն եւ ութերորդ տարում հասուհաս
Փամանակը օր չը տեսած անվնաս,
Սիրտս լի ցաւերով վերքեր անպակաս,
Անբժիշկ անբուժում անյայտ անկուման:

27.

Տասն եւ իններորդ տարում ջնձութիւն
Ունէի տեսնելու իմ խեղճ ամուսնուն.
Սիրտս ճիշդ ջնձալի, չարթնած բնութիւն,
Հոգսերս աջ ու ձախ եղած ջիր ու ցան:

28.

Քսաներորդ տարում կրկնեց կրկին,
Զգեց սրտիս մէջը նոյնքան վշտագին,
Վիճակիս համաձայն քամիներ ուժգին,
Յրտահար փչելով յոյսանքս սառցան:



36177-66

29.

Քսան եւ մէկերորդ տարիս անցուցի,
 Օտարութեան մէջ քաջ արիւն սառցուցի
 Աննպատակ, ի զուր զիս ծերացուցի.
 Անտուն, անօթեւան եւ անկեցարան:

30.

Քսան երկուերորդ տարու սկզբում,
 Նստած հայրենիքիս եմ յիշում, լալում.
 Ի՛նչ ես նստել դու այս անկեանք երկրում,
 Երբ չունիս մէկ զգայուն քո առարկան:

31.

Քսաներեքերորդ տարում օրտակից
 Ամուսնինս միտ բերելով Բարկայից.
 Ինչ օգուտ, օրերս քամակ քամակից
 Արագ արագ անցան գնացին կորան:

32.

Քսան եւ չորսերորդ տարում պաղ սրտեր.
 Էլ ինչով կարող են ցնծում գտնել, տէր.
 Դէպի այն վայրկեան թէք ընկած աչքեր,
 Հրաժարական է, ոչ թէ նորոգման:

33.

Քսան եւ հինգերորդ տարում իմ գաղտնիք,
 Ունեցածս զրկեցի դէպի հայրենիք.
 Առ իմ թշուառ, սու իմ անբախտ ընտանիք
 Բնւ է. էլ մի սպասիր իմ գալստեան:

34.

Քսան եւ վեցերորդ տարուն էլ հասանք
 Այլ կարմիր հագնելու տեղ՝ կապուտ հագանք.
 Մեր կարծած յուսածը բողջի մէջ դրանք.
 Գոնե՛ս չը ստացանք անուն հայկական:

35.

Քսան եւ եօթերորդ տարու հաս կեանքով
 Ապրում էի միայն ինչ զարհուրանքով.
 Աչեր արիւնով լիբը, սիրտ գորովանքով,
 Տրտում անջնջելի հաս տխրութիւն:

36.

Քսան եւ ութերորդ տարին բացուած,
 Ամիսներում կսկիծ, կասկած սիրտ լցուած,
 Վրէժ չառած օր կորուսած, մերկ նստած,
 Ծոյլ, խուլ, մոռնջ մարդիկ ինդալիս մեր վերան:

37.

Քսան եւ իններորդ տարում ժամէ ժամ
 Օրերս էի յիշում, լալում ամեն ամ.
 Չը ստացած մինչ հիմա նպատակ, բաղձամ
 Երբէք անպատմուճան եւ անհոգ թաղման:

38.

Երեսներորդ տարի թափառուած մարդը,
 Երեսուն եւ վեց էլ նախ անցուցած մարդը,
 Աշխատելու օրեր կորուսած մարդը
 Տգէտ կանուանեն, ոչ թէ գիտնական:

39.

Վաթսուն եւ վեց ամաց հասաց պատանին.
 Նախաճաշիկ անցած քաղցած պատանին,
 Ընթրիքից էլ անպարարտ պատանին,
 Մտած անկողնի տակ քուն ոչ գոյ նորան:

40.

Խրատ կարգացէ՛ք այս իմ փորձուած բերանից
 Ինձի նման միք լինիլ, հայրենիքից
 Օտարութեան վեհ վեհ հանդէսարանից
 Լու է հայրենիքում գերեզմանատուն:

41.

Էլ չուզիմ, պէտք չէ ինձ ոչ օգուտ, ոչ շահ:
Աղաչանքս լսիր անվերջ նախագահ.
Ո՛չ մարդ մահից փախչող է, ո՛չ մարդիցը մահ.
Միայն աննպատակ մի թող այս վայրկեան:

42.

Ամենին մեղքացիր, անմահ Բարերար.
Մեզի նման ոտնատակ չառնի աշխարհը.
Խղճա՛ խեղճիս, նոր պարգեւէ՛ մէկ ասպար,
Էլ չի ուտեմ հացն տաճկական:

43.

Խնձրկեցի Ղամզաս,
Գտնուելով ներկաս.
Այսքան իմ առարկաս
Լսելով աշխարհի՛ շինեց գասիտան:

БИБЛИОТЕКА
УНИВЕРСИТЕТА
ИМ. А. МЯСНИАН
ВАНДЗОРСКОГО
ՀԱՅԿ

ՆԵՐՍԷՍ ՍԱԶԱՆԴԱՐԵԱՆՑ (Ղամզա)

Գինն է 10 կոպ.

Վարելի է ստանալ հետեւեալ հասցեով՝ Въ
Геруси (Елисаветопольской губ.) Нерсесу Са-
зандарянъ въ Хндзорескъ

Дозволено Цензурою Тифлисъ, 1 Марта 1884 г.

Тип. М. Вартамянца и К°. троиц. церк. д. № 11



2013

